

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

*i*՝ տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսն է՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով, որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել կրեդիտի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում:

*A*՝ սպառողին տրամադրվող կրեդիտի սկզբնական գումարն է:

*n*՝ սպառողի կողմից կրեդիտի մարմանն ուղղված (կրեդիտի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ կրեդիտի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համարն է: Ընդ որում, մեկ օրվա ընթացքում կրեդիտի մայր գումարի, տոկոսագումարների և(կամ) այլ վճարումների կատարումը համարվում է մեկ վճարում:

*N*՝ կրեդիտի մարմանն (կրեդիտի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) ուղղված վերջին վճարի համարն է՝ ներառյալ նաև կրեդիտի ստացման պահին կատարվող վճարը, որից հետո սպառողի կողմից կրեդիտային պայմանագրով ստանձնած պարտավորությունները համարվում են մարված:

*Kn*՝ սպառողի կողմից կրեդիտի ստացման պահին և(կամ) կրեդիտի գործողության ընթացքում կատարված հերթական՝ *n*-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ):

*Dn* այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել կրեդիտի ստացման օրից մինչև կրեդիտի գումարի հերթական՝ *n*-րդ մարման օրը ներառյալ:

## Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակներ

### Սպառողական վարկի պայմաններ

Տրամադրվող գումար՝ 1 000 000 ՀՀ դրամ

Անվանական տարեկան տոկոսադրույք (հաստատուն)՝ 20% հաշվարկված վարկի մնացորդի վրա

Մարման ժամկետ՝ 24 ամիս կամ 730 օր

Մարման կարգ՝ ամսական հավասարաչափ մարումներ (անուիտետային):

Բանկային հաշվի սպասարկման միանվագ վճար՝ 0 ՀՀ դրամ

Վարկի տրամադրման օր՝ 15 հունիսի, 2011թ.

Առաջին մարման օր՝ 15 հուլիսի, 2011թ.

**Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 21.96%**